

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ԵՔ-ԳՇԾՁԲ-21/168>>

ք. Երևան

«Շ» «սեպտեմբեր» 2021թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է.Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ն. Սիրեկանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերը քաղաքաշինական փորձաքննության ենթարկելու նպատակով անձի հետ կնքվող պայմանագրում նախատեսվում է, որ շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում անձը

պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին.

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **236000 (երկու հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 2 (երկու) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,19 (զրո ամբողջ զրո տասնինը հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապանի կողմից գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ կլրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարող իրազեակության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով իսկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր հրավաքանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 9000122135576
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան

(ստորագրություն)

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Արխիտեկտ ՍՊԸ

Ք. Գյումրի, Շիրակացի փ. 832, ք. 40

«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930030206282300

ՀՎՀՀ 05547385

Ն. Սիրելյանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ձ/Հ		գնումների պակեով նախատեսված միջանցիկ ճանկագրի՝ Ըստ ԳԱՄ Դասակարգման (CPV)	անվանումը	ստեղծված/վերջին փոփոխությունները	Ձ/Մ	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	մատակարարման	
								հասցեն	ժամկետը
1	50531140/111	Շերտափի փող: հ. 113 2նքին հարող տարածքի վերականգնման համար նախագծա- նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	ՆԱԽԱԳՐԱԳՆԱԳՐՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԿՎԱՅՑՎՈՂ ԴԱՀՆԱՋՆԵՐԸ 22. Կառավարության 19.03.2015թ. հ.596-Ն որոշման հավելված 2 հաստատված «Քաղաքաշինության փաստաթղթերի փորձաքննության կարգի» համաձայն 1/կազմել նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն 2/փորձաքննության եզրակացությունը ներկայացնել գրավոր (հայերեն ու ռուսերեն) Նախագիծը ներկայացնել ինկոգ օրինակից տպագիր և 2 օրինակ էլեկտրոնային կրիչով/pdf ֆորմատով/: Նախագիծը ներկայացնել (հայերեն ու ռուսերեն) Ելակետային տվյալները հավաքագրվում են կատարողի կողմից ՄԻՋԱՆԳԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՑՈՒՄ - Էսքիզային առաջարկը համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ	դրամ 22 000	1	Ք. Երևան, Մեքաստիա 32	Նախագծ ա- նախահաշ վային աշխատա նքները տրամադր ելուց հետո 30 օրացուցայ ին օրվա ընթացքու մ		
2	50531140/112	Անդրանիկի փող, հ.135 2նքի բակի վերականգնման համար նախագծա- նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	ՆԱԽԱԳՐԱԳՆԱԳՐՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԿՎԱՅՑՎՈՂ ԴԱՀՆԱՋՆԵՐԸ ՀՀ Կառավարության 19.03.2015թ. հ.596-Ն որոշման հավելված 2 հաստատված «Քաղաքաշինության փաստաթղթերի փորձաքննության կարգի» համաձայն 1/կազմել նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն 2/փորձաքննության եզրակացությունը ներկայացնել գրավոր (հայերեն ու ռուսերեն) Նախագիծը ներկայացնել ինկոգ օրինակից տպագիր և 2 օրինակ էլեկտրոնային կրիչով/pdf ֆորմատով/: Նախագիծը ներկայացնել (հայերեն ու Ելակետային տվյալները հավաքագրվում են կատարողի կողմից ՄԻՋԱՆԳԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՑՈՒՄ - Էսքիզային առաջարկը համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ	դրամ 40 000	1	Ք. Երևան, Մեքաստիա 32	Նախագծ ա- նախահաշ վային աշխատա նքները տրամադր ելուց հետո 30 օրացուցայ ին օրվա ընթացքու մ		

Աշխատանքի

3	50531140/113	<p>Անդրանիկի փող. հ.143 2ենքին հարող տարածքի վերակառուցման համար նախագծա- նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում</p>	<p>ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱԲՆՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀՀ կառավարության 19.03.2015թ.հ.596-Ն որոշման հավելված 2 հաստատված «Քաղաքաշինության փաստաթղթերի փորձաքննության կարգի» համաձայն 1/կազմել նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն 2/փորձաքննության եզրակացությունը ներկայացնել գրավոր (հայերեն ու ռուսերեն) Նախագիծը ներկայացնել հինգ օրինակից տպագիր և 2 օրինակ էլեկտրոնային կրիչով/pdf ֆորմատով: Նախագիծը ներկայացնել (հայերեն ու ռուսերեն) Ելակետային տվյալները հավաքագրվում են կատարողի կողմից ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՏՅՈՒՄ - Էսթիզային առաջարկը համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ</p>	<p>դրամ 28 000</p>	1	<p>Ք. Երևան, Սեբաստիա 32</p>	<p>Նախագծ ա- նախահաշ վային աշխատա նքները տրամադր ելուց հետո 30 օրացուցայ ին օրվա ընթացքու մ</p>
4	50531140/114	<p>Բ-2 թաղ. հ.135 շենքին հարող տարածքի վերակառուցման համար նախագծա- նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում</p>	<p>ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱԲՆՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀՀ կառավարության 19.03.2015թ.հ.596-Ն որոշման հավելված 2 հաստատված «Քաղաքաշինության փաստաթղթերի փորձաքննության կարգի» համաձայն 1/կազմել նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն 2/փորձաքննության եզրակացությունը ներկայացնել գրավոր (հայերեն ու ռուսերեն) Նախագիծը ներկայացնել հինգ օրինակից տպագիր և 2 օրինակ էլեկտրոնային կրիչով/pdf ֆորմատով: Նախագիծը ներկայացնել (հայերեն ու ռուսերեն) Ելակետային տվյալները հավաքագրվում են կատարողի կողմից ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՏՅՈՒՄ - Էսթիզային առաջարկը համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ</p>	<p>դրամ 40000</p>	1	<p>Ք. Երևան, Սեբաստիա 32</p>	<p>Նախագծ ա- նախահաշ վային աշխատա նքները տրամադր ելուց հետո 30 օրացուցայ ին օրվա ընթացքու մ</p>

5	50531140/115	<p>Օհանովի փող., հ.7 2ենքին հարող տարածքի վերակառուցման համար նախագծա- նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում</p>	<p>ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԼԱՆՋՆԵՐԸ ՀՀ Կառավարության 19.03.2015թ.հ.596-Ն որոշման հավելված 2 հաստատված «Քաղաքաշինության փաստաթղթերի փորձաքննության կարգի» համաձայն 1/կազմել նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն 2/փորձաքննության եզրակացությունը ներկայացնել գրավոր (հայերեն ու ռուսերեն) Նախագիծը ներկայացնել հինգ օրինակից տպագիր և 2 օրինակ էլեկտրոնային կրիչով/pdf ֆորմատով: Նախագիծը ներկայացնել (հայերեն ու ռուսերեն) Ելակետային տվյալները հավաքագրվում են կատարողի կողմից ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՄԱՉԱՅՆՏՈՒՄ - Եսթիզային առաջարկը համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ</p>	<p>դրամ</p> <p>34000</p> <p>1</p> <p>Ք. Երևան, Սեբաստիա 32</p>	<p>Նախագծ ա- նախահաշ վային աշխատա նքները տրամադր ելուց հետո 30 օրացուցայ ին օրվա ընթացքու մ</p>
6	50531140/116	<p>Սվաճյան փող., հ.38 2ենքի դիմացի աստիճանների վերակառուցման համար նախագծա- նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում</p>	<p>ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԼԱՆՋՆԵՐԸ ՀՀ Կառավարության 19.03.2015թ.հ.596-Ն որոշման հավելված 2 հաստատված «Քաղաքաշինության փաստաթղթերի փորձաքննության կարգի» համաձայն 1/կազմել նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն 2/փորձաքննության եզրակացությունը ներկայացնել գրավոր (հայերեն ու ռուսերեն) Նախագիծը ներկայացնել հինգ օրինակից տպագիր և 2 օրինակ էլեկտրոնային կրիչով/pdf ֆորմատով: Նախագիծը ներկայացնել (հայերեն ու ռուսերեն) Ելակետային տվյալները հավաքագրվում են կատարողի կողմից ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՄԱՉԱՅՆՏՈՒՄ - Եսթիզային առաջարկը համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ</p>	<p>դրամ</p> <p>14000</p> <p>1</p> <p>Ք. Երևան, Սեբաստիա 32</p>	<p>Նախագծ ա- նախահաշ վային աշխատա նքները տրամադր ելուց հետո 30 օրացուցայ ին օրվա ընթացքու մ</p>

7	50531140/117	<p>Օհանովի փողոցից դեպի Մարտիրոս փող. հ.94/4 և 94/6 տներ տանող անցուղու աստիճանների վերակառուցման համար նախագծա- նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում</p>	<p>ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀՀ կառավարության 19.03.2015թ.հ.596-Ն որոշման հավելված 2 հաստատված «Քաղաքաշինության փաստաթղթերի փորձաքննության կարգի» համաձայն 1/կազմել նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն 2/փորձաքննության եզրակացությունը ներկայացնել գրավոր (հայերեն ու ռուսերեն) Նախագիծը ներկայացնել հինգ օրինակից տպագիր և 2 օրինակ էլեկտրոնային կրիչով/pdff ֆորմատով/: Նախագիծը ներկայացնել (հայերեն ու ռուսերեն) Ելակետային տվյալները հավաքագրվում են կատարողի կողմից ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՏՅՈՒՄ - Եսթիզային առաջարկը համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ</p>	<p>դրամ 22000</p>	1	<p>Նախագծ ա- նախահաշ վային աշխատա նքները տրամադր ելուց հետո 30 օրացուցայ ին օրվա ընթացքու մ</p>
8	50531140/118	<p>Անդրանիկի փող. հ. 87 շենքի բակի անցուղու աստիճանների վերակառուցման համար նախագծա- նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում</p>	<p>ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀՀ կառավարության 19.03.2015թ.հ.596-Ն որոշման հավելված 2 հաստատված «Քաղաքաշինության փաստաթղթերի փորձաքննության կարգի» համաձայն 1/կազմել նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն 2/փորձաքննության եզրակացությունը ներկայացնել գրավոր (հայերեն ու ռուսերեն) Նախագիծը ներկայացնել հինգ օրինակից տպագիր և 2 օրինակ էլեկտրոնային կրիչով/pdff ֆորմատով/: Նախագիծը ներկայացնել (հայերեն ու ռուսերեն) Ելակետային տվյալները հավաքագրվում են կատարողի կողմից ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՏՅՈՒՄ - Եսթիզային առաջարկը համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ</p>	<p>դրամ 14000</p>	1	<p>Նախագծ ա- նախահաշ վային աշխատա նքները տրամադր ելուց հետո 30 օրացուցայ ին օրվա ընթացքու մ</p>

9	50531140/119 Շերամի 107 շենքի ետնամասի անցուղու աստիճանների վերակառուցման համար նախագծա- նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	<p>ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԼԱՆՃՆԵՐԸ</p> <p>ՀՀ Կառավարության 19.03.2015թ.հ.596-Ն որոշման հավելված 2 հաստատված «Քաղաքաշինության փաստաթղթերի փորձաքննության կարգի» համաձայն 1/կազմել նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն 2/փորձաքննության եզրակացությունը ներկայացնել գրավոր (հայերեն ու ռուսերեն) Նախագիծը ներկայացնել հինգ օրինակից տպագիր և 2 օրինակ էլեկտրոնային կրիչով/pdf ֆորմատով/: Նախագիծը ներկայացնել (հայերեն ու ռուսերեն) Ելակետային տվյալները հավաքագրվում են կատարողի կողմից ՄԻՋԱՆԿՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄ - Էսթիկային-առաջարկը համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ</p>	դրամ 22 000	1	Ք. Երևան, Սեֆաստիկա 32	Նախագծ ա- նախահաշ վային աշխատա նքները տրամադր ելուց հետո 30 օրացուցայ ին օրվա ընթացքու մ
ընդամենը			236000			

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Երևանի քաղաքապետարան
Ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ. 9000122135576
ՀՎՀՀ 02593108



Կ Ա Տ Ա Ր ՈՂ

Արխիտեկտ ՄՊԸ
Ք. Գյումրի, Շիրակացի փ. 832. քն 40
«Կոնսվերտ բանկ» ՓԲԸ
Հ/Հ. 0930030206282300
ՀՎՀՀ 05547385



Ն. Սիդեկանյան
(տնօրագրություն)
Կ.Տ.

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

գտնվելով այրը _____
 հհ _____
 հվհհ _____

գտնվելով այրը _____
 հհ _____
 հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամկացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկ կողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ստորագրություն

ազգանուն, անուն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Կ.Տ.

ConverseBank	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ընթացիկ և Խնայողական հաշիվների բացման և վարման կարգ	PR 72-01		
	Հավելված 9 Վճարման հանձնարարագրի օրինակելի ձև	Ամսաթիվ 22.05.17թ.	Խմբագրություն 12	1/75

ՀՀ դրամով, ներբանկային և/կամ Bank Mail համակարգով կատարվող փոխանցումների համար
PAYMENT ORDER. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ

DATE. ԱՍՍԱԹԻՎ _01/09/21_

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՍԱՐԸ DOC. NUMBER	002595	ՎՃԱՐՄԱՆ ԱՍՍԱԹԻՎ VALUE DATE	
50: ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԻ ՀԱՍԱՐԸ ACCOUNT NUMBER		1930030206282300	
ՎՃԱՐՈՂ ORDERING CUSTOMER		Ա Ր Խ Ի Տ Ե Կ Տ Ս Պ Ը ՀՎՀՀ 05547385 Սոցիալական քարտ	
52 ՎՃԱՐՈՂԻ ԲԱՆԿ ORDERING CUSTOMER'S BANK		«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	
32: ԳՈՒՄԱՐԸ (թվերով և/կամ բառերով) AMOUNT		23,600.00 AMD	
ԱՐԺՈՒՅԹԸ (բառերով կամ կողով) CURRENCY Ոսկու դեպքում՝ գրամով Grams if gold		Ք ս ա ն եր ե ք հ ա գ ա ր վ ե ց հ ա ր յ ու ը դ ր ա մ	
57: ՄԱՍՆԱԳՐԱԿԱՆ ACCOUNT WITH INSTITUTION		Հ Հ Կ Բ գ ո թ .վ ա ր չ ու թ յ ու ն /Հ Հ Ֆ Ի ն ա ն ս . ն ա խ .	
59: ԾԱՀԱՌՈՒՆ BENEFICIARY		Հ ա յ տ Ի և պ ա յ մ ա ն ա գ ր Ի ա պ ա հ ո Վ ու Մ ը Բ ա ն կ ա յ Ի ն Եր ա շ Խ Ի ք ո Վ կ ա մ կ ա ն Խ Ի կ փ ո ղ Ի ծ և ո Վ	
ԾԱՀԱՌՈՒՆԻ ՀԱՇՎԻ ՀԱՍԱՐԸ ACCOUNT NUMBER		900008000664	
70 ԳՈՐԾԱՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ PAYMENT DETAILS		Ե Զ -Գ Հ Ծ Զ Բ -21/168 Ծ ա ծ կ ա գ ր ո Վ պ ա յ մ ա ն ա գ ր Ի ա պ ա հ ո Վ ու Մ	
71A ԾԱՌԱՅՈՒՄԻ ՄԱՆՐԱՍՏԱՍԵՐԸ DETAILS OF CHARGES *			

ACCOUNT HOLDER
ՀԱՇՎԵՏԵՐ

Seal
Կ.Տ.

SIGNATURE
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
AUTHORISED PERSON'S SIGNATURE

ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԸ (դրույքը և/կամ գումարը)
COMMISSION (rate and/or amount)

100.00 Հայկական դրամ

* Կիրառելի է արտարժույթով փոխանցումների դեպքում

